ք. Երևան 10.10.2024թ.

ՈՐՈՇՈՒՄ № 1

ՀՀ ԱՆ «Կախվածությունների բուժման ազգային կենտրոն» ՓԲԸ-ի

տնօրեն Սուրեն Նազինյանի

ՄԱՍՆԱԿՑԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑԱՆԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Բժշկական նշանակության ապրանքների» ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԿԲԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-24/15» ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) 2-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից է ճանաչվել նվազագույն գնային առաջարկ ներկայացրած «ՀԼԵՅԿՍ ՌԵԶՈՐՏ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Վաճառող), որի հետ կնքվել է «ԿԲԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-24/15-2» ծածկագրով պայմանագիրը: Կնքված պայմանագրի շրջանակներում տրվել է պատվերի հայտ սույն թվականի հուլիսի 24-ին, ամբողջ 2-րդ չափաբաժինի մատակարարման մասով: Ըստ կնքված պայմանագրի առաջին մատակարարումը պետք է իրականացվեր մինչև օգոստոսի 12-ը ներառյալ, որը չի իրականացվել մինչև սույն թվականի սեպտեմբերի 3-ը՝ խախտելով կնքված պայմանագրի 2.1.1 և 2.1.7 կետի (բ) ենթակետերը, համաձայն որոնց կնքված պայմանագիրը համարվում է միակողմանի լրիվ լուծված, եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը, ապրանքի մատակարարման ժամկետը խախտելով 2 օրից ավելի:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտ ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցանկում: Ընդ որում, գնումների գործընթացի կազմակերպման կարգի 121-րդ կետի համաձայն՝ մասնակցի Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված ցուցակում ներառվելը, դրանում գտնվելու ժամանակահատվածում, ինքնաբերաբար հանգեցնում է վերջինիս հետ փոխկապակցված անձանց գնումների գործընթացին մասնակցության իրավունքի սահմանափակման:

Միաժամանակ, Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8.14 կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա ՀՀ լիազոր մարմինը (այսուհետ՝ ՀՀ ֆինանսների նախարարություն) մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցանկում:

Ուսումնասիրելով Օրենք 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները, հիմք ընդունելով «ԿԲԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-24/15» ընթացակարգի սահմանված պատասխանատու ստորաբաժանման կողմից 03.09.2024 թվականի զեկուցագիրով «ՀԼԵՅԿՍ ՌԵԶՈՐՏ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցանկում ներառելու նպատակով ներկայացված փաստերը, ՀՀ ԱՆ «Կախվածությունների բուժման ազգային կենտրոն» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Պատվիրատու) տնօրենի կողմից 06.09.2024թ. «ՀԼԵՅԿՍ ՌԵԶՈՐՏ» ՍՊԸ-ին ուղղված «ԿԲԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-24/15-2» ծածկագրով պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցումը և 10.09.2024 թվականին որակավորման ու պայմանագրի ապահովման վճարման ծանուցումների

ներկայացնումը Մատակարարի սպասարկող բանկ՝ «Ամերիաբանկ» ՓԲԸ (այսուհետ՝ Բանկ), որին ի պատասխան 26.09.2024թ. Բանկից ստացվում է գրություն, որ Վաճառողի բանկային հաշվին Պահանջագրով նշված գումարի չափով դրամական միջոցների բացակայության մասին գրությունը և առաջնորդվելով Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով.

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացրած և հետագայում ի հայտ եկած այլ՝ սույն որոշմամբ ներկայացված հիմքերը «ՀԼԵՅԿՍ ՌԵԶՈՐՏ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցանկում ներառելու վերաբերյալ գնահատել բավարար:
2. «ՀԼԵՅԿՍ ՌԵԶՈՐՏ» ՍՊԸ-ի ներքոհիշյալ տվյալները համապատասխան հիմքերով գրավոր ուղարկել ՀՀ ֆինանների նախարարություն, գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցանկում ներառելու նպատակով:

Մասնակցի						
Անվանումը	ՀՎՀՀ/ֆիզ.անձի դեպքում հանրային ծառայության համարանիշ	Գործունեության հասցե	Գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու իրավական հիմքը			Ցուցակում ներառվելու մասին պատվիրատուի ղեկավարի կայացրած որոշման ամսաթիվը և գնման ընթացակարգի ծածկագիր
			Խախտվել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը	Խախտվել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը	Որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից	
<<ՀԼԵՅԿՍ ՌԵԶՈՐՏ>> ՍՊԸ	ՀՎՀՀ 06962935	Ք.Վանաձոր, Զոր. Անդրանիկի 58/30	Խախտվել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը	-	-	Տնօրենի 09.10.2024թ. կայացրած որոշում և գնման ընթացակարգի ծածկագիր՝ ԿԲԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-24/15

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվան հաջորդող օրը:

ՀՀ ԱՆ «Կախվածությունների բուժման ազգային կենտրոն» ՓԲԸ-ի

ՏՆՕՐԵՆ՝ Digitally signed by NAZINYAN SUREN 3103820607
Дата: 2024.10.10 11:09:50 GMT+04:00 Ս. ՆԱԶԻՆՅԱՆ